ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

29 օգոստոսի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

119
(2785)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԿՆՈՋ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ 5 ԱՆԳԱՄ ԱՎԵԼԱՑԵԼ ԵՆ

2021 թվականին մամուլում մեծ աղմուկ բարձրացավ, որ «ՀայՓոստ» ընկերությունը «ատեստացիայի անվան տակ զանգվածային կրճատումներ է անում»: Պարզվում է՝ «ՀայՓոստ»-ում կան աշխատակիցներ, որոնք, ընկերության ֆինանսական ծանր դրությանը զուգահեռ, բարելավել են իրենց ֆինանսական վիճակը, օրինակ՝ ԱԺ ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանի կինը: «Ժողովուրդ» օրաթերթը թերթեց ՀՀ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հայկ Կոնջորյանի կնոջ՝ Շուշան Ալեքսանյանի կողմից ներկայացված պաշտոնական հայտարարագիրը, եւ պարզվեց, որ հեղափոխության տարում նա ամսական մոտ 470 հազար ՀՀ դրամ (ներառյալ հարկերը) աշխատավարձ է ստացել: Այնուհետեւ, երբ 2020-ից աշխատանքի է անցել «ՀայՓոստ» ՓԲԸ-ում, վարձատրություն է ստացել 1 մլն 900 հազար դրամ, որը 2 տարի անց՝ ամուսնու պաշտոնական առաջխաղացումից հետո, դարձել է 9 մլն 474 հազար դրամ: Այսինքն՝ 2021 թվականին «ՀայՓոստ»-ից նա ստացել է 6 մլն 812 հազար դրամ, իսկ 2022 թվականին՝ 9 մլն 474 հազար դրամ: Թե ինչպես, ինչի հաշվին է Շուշան Ալեքսանյանի ստացած ամսական մոտ 150 հազար ՀՀ դրամ վարձատրությունը 2 տարի անց դարձել ամսական մոտ 800 հազար դրամ, դժվար է ասել: Բարդագույն այս հարցի պատասխանը փորձեցինք ստանալ գործատուից: Ինչպե՞ս է ստացվել, որ ՀՀ ԱԺ պատգամավոր Հայկ Կոնջորյանի կնոջ՝ Շուշան Ալեքսանյանի աշխատանքի վաձատրությունը աճել է գրեթե 4 մլն-ով՝ դառնալով 9 մլն 474 հազար դրամ: Ի՞նչ հիմնավորմամբ է եղել աշխատանքի վարձատրության բարձրացումն այն դեպքում, երբ որոշ ժամանակ առաջ «ՀայՓոստ» ՓԲԸ-ն մասսայականորեն հաստիքներ էր կրճատում մարզերի եւ Երեւանի մասնաճյուղերում, նաեւ «ՀայՓոստ»-ում ՊՎԾ-ի կողմից արձանագրվել են շուրջ 4,1 մլրդ դրամի խախտումներ, որի համար ընկերությունը տուգանվել է: Ի պատասխան «Ժողովուրդ» օրաթերթի այս հստակ հարցադրումներին «ՀայՓոստ»-ից ստացանք հետեւյալ պատասխանը. «Հարցման մեջ նշված անձը «ՀայՓոստ» ՓԲԸ-ում աշխատանքի է անցել 2020 թվականից, աշխատանքի վարձատրությունը որոշված է ընկերության եւ աշխատակցի միջեւ կնքված աշխատանքային պայմանագրով սահմանված ամսական դրույքաչափով, որը, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն, հանդիսանում է սահմանափակ տարածման ծառայողական տեղեկություն, որը ենթակա չէ տրամադրման կամ հրապարակման ՀՀ աշխատանքային օրենսգրքի 199-րդ հոդվածի ուժով»: Այսինքն՝ «ՀայՓոստ»-ը գաղտնի է պահում, թե ինչպես է կրճատումներ իրականացնող ընկերությունում կոնկրետ ՔՊ խմբակցության ղեկավարի կինը աշխատավարձի մոտ 5 անգամ բարձրացում ունեցել:

Ամառվա տապը քիչ-քիչ կոտրվում է՝ տեղը զիջելով աշնանային նուրբ եղանակին: Թեժ արեւին փոխարինելու է գալիս մելամաղձոտ աշունը, սակայն վիզաների ու անձնագրայինների թեժ ու ինչ-որ տեղ նաեւ հոգնեցնող հերթերը այդպես էլ չեն վերանում: Շատ քաղաքացիներ, որոնք պլանավորել էին իրենց հանգիստն անցկացնել երկրից դուրս, դեռեւս սպասում են վիզա ստանալու իրենց հերթին, այնինչ շատ-շատերը անհասկանալի կարճ ժամկետում ստացել են իրենց վիզաներն ու երկրից երկիր են շրջագայում: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ այս առեղծվածի հիմքում մի շարք տուրիստական ընկերությունների «հերթ առաջ տալու» բիզնեսն է: Իսկ ի՞նչ է դա նշանակում: Մինչեւ ուշ գիշեր լինում են դեպքեր, երբ վիզա ստանալու օնլայն համակարգում իրենց հերթից հրաժարվում, այլ կերպ ասած՝ «հերթից դուրս են գալիս» բազմաթիվ քաղաքացիներ, եւ փաստացի շատ ուշ ժամերի ազատված տեղեր են ի հայտ գալիս, եւ այս առիթը օգտագործելով՝ տուրիստական շատ ընկերություններ գումարի դիմաց մարդկանց առաջարկում են վիզա ստանալու օրը «առաջ գցել»: Արդյունքում ոմանք շատ կարճ ժամանակահատվածում ստանում են վիզաներ, ոմանք էլ, տեղյակ չլինելով գործի նրբություններից, ամիսներով սպասում են իրենց հերթին: «Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Վիզաների աջակցման կենտրոնի ղեկավար Անի Քոչարյանի հետ, որպեսզի պարզենք, թե ինչու է խտրական վերաբերմունք ցուցաբերվում քաղաքացիների նկատմամբ: Անի Քոչարյանն ասաց, թե հեռախոսով հարցերի չի պատասխանում: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնապես գրավոր հարցում ուղարկել է Վիզաների աջակցման կենտրոն: Պատասխանը ստանալուն պես կհրապարակենք:

2023 թվականի հուլիսի 1-ից 31-ը ՀՀ Ազգային ժողովը 2023թ. պատվիրակությունների ընդունման եւ արտասահմանյան այցելությունների կազմակերպման համար 3 մլն 872 հազար դրամ ընդհանուր արժողությամբ կոնյակներ է ձեռք բերել: Գնումը դարձյալ կատարված է «Վինո Վինո» ՍՊԸ-ից: Իսկ ապրիլին նույն կազմակերպությունից գնվել էին 10 մլն 752 հազար դրամ ընդհանուր արժեքով կոնյակներ: Նույն թվականի հունիսի 1-ից 30-ը ընկած հատվածում Ազգային ժողովը նույն պատճառաբանությամբ՝ պաշտոնական պատվիրակությունների ընդունելության եւ արտասահմանյան այցելությունների կազմակերպման համար, նաեւ օղիներ էր ձեռք բերել 959 հազար 670 դրամով «Նոաս Օրչարդս Դիսթիլինգ Քոմպանի» ՍՊԸ-ից: Այսինքն՝ այն մեղադրանքները, որոնք հնչեցվում էին նախկինների եւ այն կառույցների հասցեին, որոնք, իբրեւ, մսխում էին պետական բյուջեի գումարները, հատկանշական են նաեւ հիմա. նախկինից ոչնչով չտարբերվող քաղաքականությամբ պետբյուջեի միջոցները անխնա ծախսվում են:



Հայկ Մարությանը, որ երեւանցիներին առաջարկում է շարունակել կիսատ թողած աշխատանքը, իր պաշտոնավարման ժամանակ աշխատանքի պատասխանատվությամբ չի փայլել: «Ժողովուրդ» օրաթերթը շատ է գրել, որ նա ամենաշատ արձակուրդ վերցրած քաղաքապետերից է եղել: Եւ հիմա երեւան են գալիս տարբեր տեղեկություններ, թե ինչպես է նրա գործողությունների հետեւանքով տուժել մայրաքաղաք Երեւանը: Տեղեկություններ ենք ստացել այն մասին, որ նոր աղբավայրի կառուցման մրցույթի գնահատումը ձախողել է Հայկ Մարությանը, քանի որ ոչ մի մասնակից Հայկ Մարությանի հետ կապ հաստատել չի ցանկացել, իսկ իր սրտի ուզած մասնակցին էլ ինքը՝ Մարությանը, չի կարողացել անցկացնել: Ավելին՝ հանձնարարել է իր խորհրդական Արթուր Սարգսյանին չգնահատել մրցույթի մասնակիցների հայտերը, մինչեւ ժամկետները անցնեն, եւ մրցույթը ձախողվի: Իսկ ո՞վ էր Արթուր Սարգսյանը, որ կատարել է Մարությանի տարակուսելի հանձնարարականը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ նրան քաղաքապետարանում աշխատանքի է բերել քաղաքապետի կինը՝ Իվա Մարությանը, ում ընկերուհին Արթուր Սարգսյանի մտերիմ ընկերուհին է, ինչպես նաեւ Իվա Մարությանի հիմնադրամի տնօրենը: Ինչո՞ւ է ձախողվել նոր աղբավայրի կառուցման մրցույթը: «Ժողովուրդ» օրաթերթը դարձյալ փորձեց Հայկ Մարությանից մեկնաբանություն ստանալ, սակայն չհաջողվեց: Նա ինչպես քաղաքապետարանում էր անհասանելի լրագրողների համար, այնպես էլ հիմա է:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է «ԱՆԿԱԽ ԴԻՏՈՐԴ»-Ը

Օգոստոսի 23-ից մեկնարկել է Երեւանի ավագանու ընտրությունների քարոզարշավը:

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի անդամ Դանիել Իոաննիսյանի հետ՝ պարզելու համար, թե դիտորդ մարմինն ինչ խախտումներ է արձանագրել այս ընթացում:

Վերջինս մեզ հետ զրույցում նշեց, որ հիմնական խնդիրն այն է, որ, օրինակ, մինչ քարոզարշավի մեկնարկը Երեւանի քաղաքապետարանի մեդիառեսուրսները եւ Հանրային Հեռուստաընկերությունն ակտիվորեն իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քաղաքապետի թեկնածու Տիգրան Ավինյանի քարոզարշավն են իրականացրել, ընդ որում՝ նրան լուսաբանել են ավելի շատ, քան մյուս բոլոր փոխքաղաքապետերին միասին:

-Պետք է ասեմ, որ երկարաժամկետ դիտորդության միջանկյալ զեկույցը կլինի ամենայն հավանականությամբ տասը օրից, հետեւաբար այս պահին ներկայացնելու դիտարկումներ չկան: Այդուհանդերձ պետք է ասեմ, որ եթե մենք ինչ-որ էական, լուրջ հանցագործություններ պարունակող խախտումներ արձանագրեինք, դրա մասին առանձին հայտարարությամբ հանդես կգայինք: Նման խախտումներ քարոզարշավի փուլում մենք չենք հանդիպել: Մենք արձանագրել ենք որոշակի խնդիրներ նախքան քարոզարշավը, մասնավորապես՝ Երեւանի քաղաքապետարանի մեդիառեսուրսներով եւ Հանրային հեռուստաընկերությամբ Տիգրան Ավինյանի մրցակցայն առավելության ստեղծման առումով:

-Պարոն Իոաննիսյան, այժմ էլ ամենուր հանդիպում ենք Տիգրան Ավինյանի քարոզչական պաստառներին, մինչդեռ մյուս թեկնածուների պաստառներին հազվադեպ կարելի է հանդիպել: Սա արդյոք խախտում չէ՞, արդյոք անհավասարություն չէ՞:

-Ոչ, քանի որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նաեւ «Իրազեկ քաղաքացիների միավորման» առաջարկած օրենսդրական կարգավորման արդյունքում հավասարապես բաշխում է հանրային տրանսպորտի կանգառները, վերելակները եւ դեռ հին ժամանակներից գործող գովազդային մեծ վահանակները: Այսինքն՝ չի կարող որեւէ ուժ ուզենալ եւ չստանալ, օրինակ, վերելակում գովազդ փակցնելու հնարավորություն: Այստեղ հարցն այն է, որ, հնարավոր է, մեկ ուժ պատվիրի այդ ամենը, մյուսն ասի՝ ես այդ ամենը կանեմ հեռուստացույցով կամ թռուցիկներ կբաժանեմ: Ուժերը իրենք են որոշում՝ որ միջոցին դիմեն. ի սկզբանե բոլորին հավասար հնարավորություններ է տրված: Դա չի նշանակում, որ կան պաստառներ, որոնք օրենքի խախտմամբ են փակցված: Իհարկե, նկատել ենք որոշ պաստառներ, որոնք փակցված են օրենքի խախտմամբ, որոնք այդքան էլ զանգվածային չեն եղել:

-Ո՞ր ուժի պաստառն է դա եղել:

-Քանի որ այս պահին զեկույցի մանրամասները դեռ չկան, անուններ ասել այս պահին չեմ կարող. մոտավորապես տասը օրից կհայտարարվի: Հիմա էթիկապես ճիշտ չի լինի ասել մի քաղաքական ուժի անուն, որն այս պահին գիտեմ, սակայն նրա մասին, որին դեռ տեղյակ չեմ, չասեմ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԱՆԱՐԳԱՆՔ՝ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանն օգոստոսի 28-ին Սլովենիայում հանդիպում է ունեցել Կորեայի Հանրապետության ԱԳ նախարար Պակ Չինի հետ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ զրուցակիցները քննարկել են երկկողմ օրակարգն ընդլայնելու եւ երկուստեք հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում համագործակցությունը խորացնելու հնարավորությունները՝ պատրաստակամություն հայտնելով քայլեր ձեռնարկել առկա ներուժն առավել արդյունավետ իրացնելու ուղղությամբ:

Որպես համագործակցության հեռանկարային ուղղություններ մատնանշվել են մասնավորապես առեւտրատնտեսական, գիտական, կրթական, մշակութային, ինչպես նաեւ նորարարությունների եւ բարձր տեխնոլոգիաների ոլորտները: Այս համատեքստում կարեւորվել է Կորեայի միջազգային համագործակցության գործակալության հետ հաստատված արդյունավետ փոխգործակցության ընդլայնումը:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել տարածաշրջանային անվտանգության հարցերին:

Արարատ Միրզոյանը գործընկերոջն է ներկայացրել Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի՝ արդեն 8 ամսից ավել շարունակվող ապօրինի արգելափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղում ահագնացող հումանիտար ճգնաժամի մանրամասները՝ուշադրություն հրավիրելով սննդի, դեղորայքի եւ առաջին անհրաժեշտության ապրանքների սուր պակասի պայմաններում հատկապես խոցելի խմբերի՝ երեխաների, կանանց, տարեցների եւ խրոնիկ հիվանդություններ ունեցող անձանց համար ստեղծված ծանրագույն մարտահրավերներին:

Նշենք նաեւ, որ ՀՀ ԱԳ նախարարն ընդգծել է, որ Ադրբեջանն իր գործողություններով ոչ միայն կոպտորեն խախտում է միջազգային մարդասիրական եւ մարդու իրավունքների հիմնարար դրույթները, այլեւ Լաչինի միջանցքը փակ պահելով՝ բացահայտ անարգանք է դրսեւորում Արդարադատության միջազգային դատարանի փետրվարի 22-ի եւ հուլիսի 6-ի որոշումների նկատմամբ:

Վերահաստատելով Հարավային Կովկասում խաղաղության եւ կայունության հաստատման հարցում հայկական կողմի հանձնառությունը՝ Արարատ Միրզոյանն ընդգծել է, որ պաշտոնական Բաքուն իր գործելաոճով խոչընդոտում է այդ ուղղությամբ Հայաստանի եւ միջազգային հանրության ջանքերին:

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՌԵՎԱՆԳՈՒՄԸ

Ռուս խաղաղապահների միջնորդությամբ Հայաստան տեղափոխվող արցախցիների խմբից քիչ առաջ ադրբեջանցիները հերթական տղամարդուն են առեւանգել:

«Ժողովուրդ» օրաթերթին հաջողվեց պարզել, որ ադրբեջանցիների կողմից առեւանգված քաղաքացին 21-ամյա երիտասարդ է: Մենք տեղեկացանք, որ դեպքը տեղի է ունեցել Հակարիի կամրջի մոտ:

Արցախի տեղեկատվական շտաբից հայտնում են, որ Լաչինի միջանցքում գտնվող ապօրինի անցակետում առեւանգված երիտասարդն Ալեն Նելսոնի Սարգսյանն է՝ ծնված 2001թ.:

«Առեւանգման պատճառների մասին որեւէ հավաստի տեղեկություն դեռեւս հայտնի չէ: Ալեն Սարգսյանն ուսանող է, որը մեկնում էր Երեւան իր ուսումը շարունակելու նպատակով:

Ադրբեջանը շարունակում է Արցախի ժողովրդի հանդեպ ցեղասպանական քաղաքականությունը՝ հերթական անգամ խախտելով միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը: Դեպքի վերաբերյալ մանրամասները կհայտնվեն ավելի ուշ», - հայտնում են շտաբից:

ԴԻՐՔԵՐՈՒՄ ՔՆԵԼՈՒ ՀԱՐՑԸ ԼՐՋԱՑԵԼ Է

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ ՊՆ Սյունիքի մարզի բանակային կորպուսում ազատումներ են սպասվում: Պարզվում է՝ ՊՆ ղեկավար կազմը քննարկել է այն հարցը, որ դիրքերում քնելու թեման հայոց բանակում հատկապես վերջին շրջանում շատ է լրջացել, հաճախ ճակատագրական ավարտ է ունեցել զինվորների համար: Երեկ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել էր, որ օգոստոսի 27-ին դեռեւս չպարզված հանգամանքներում հրազենային մահացու վիրավորում էին ստացել ՊՆ N զորամասի զինծառայողներ Արտյոմ Հայկազյանը եւ Արմեն Խաչատրյանը: Մեզ հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ զինվորները դարձյալ մարտական դիրքում քնելու թեմայով վիճել են, որից հետո կռիվը թեժացել է, ու կրակել են միմյանց վրա. բժիշկներին չի հաջողվել նրանց կյանքը փրկել: Հիշեցնենք, որ օգոստոսի 10-ին մահացած ժորա Կարապետյանի գործով արդեն կա երկու ձերբակալված: Ըստ քննության տվյալների՝ զինվորին ծառայակիցներն էին հասցրել այն վիճակին, որ ինքնասպան էր եղել. պատճառը կրկին մարտական դիրքում քնելն է եղել:

ՔՊ-Ի ԱԹՈՌԱԿՌԻՎԸ

Երեւանում նախընտրական թոհուբոհ է, իսկ Արցախում մարդիկ են առեւանգվում: Այն իշխանությունները, որոնք պարտվեցին պատերազմում, այժմ չեն տիրապետում Հայաստանում տիրող իրավիճակին. ՔՊ-ականները ժառգոնով քարոզարշավ են անում:

Արցախի Հակարիի կամուրջում տեղադրված անցակետում քաղաքացիներ են առեւանգում, ապա մեղադրանքներ առաջադրում, ինչպես Վիգեն Խարատրյանի դեպքում: Այն պահին, երբ ՔՊ-ականները փողոցներում քարոզարշավ են անում, նույն անցակետում ձերբակալվում եւ առեւանգվում է 21-ամյա մի երիտասարդ:

Այսինքն՝ իշխանություններն այլեւս պատասխանատվություն չեն կրում ՀՀ եւ Արցախի քաղաքացիների համար եւ չեն երաշխավորում նրանց անվտանգությունը: Ստացվում է՝ Ադրբեջանը կարող է յուրաքանչյուրիս նկատմամբ հետախուզում հայտարարարել, ապա որեւէ ուղեւորության ժամանակ պարզապես առեւանգել, իսկ այդ ընթացքում ՔՊ-ական իշխանությունը շարունակում է աթոռակռիվը:

ԿՀԱՆՁՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Օգոստոսի 31-ին՝ ժամը 11:00-ին, «ՀայաՔվեն» կենտրոնական ընտրական հանձնաժողով կհանձնի հավաքված ստորագրությունները:

«Միացե՛ք մեզ, միասին հանձնենք մեր համատեղ որոշման արդյունքները, տեր կանգնենք ստորագրություններին:

Մինչ հանդիպում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի մոտ՝ Գ. Քոչար 21ա», - հայտնում են նախաձեռնության ֆեյսբուքյան էջում:

Հիշեցնենք, որ «ՀայաՔվե»-ն քաղաքացիական-օրենսդրական նախաձեռնություն է, որն առաջարկում է քրեականացնել Հայաստանի Հանրապետության անունից Արցախն այլ պետության մաս ճանաչող եւ Հայոց ցեղասպանության նշանակությունը նսեմացնող ցանկացած գործողություն:

ՄԱԿՐՈՆԻ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը համաժողովում ասել է, որ այս շաբաթ բանակցություններ կվարի Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների հետ եւ հանդես կգա նոր դիվանագիտական նախաձեռնությամբ Լեռնային Ղարաբաղում հակամարտությունը կարգավորելու համար:

«Այս շաբաթ ես կխոսեմ վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ նախագահ Իլհամ Ալիեւի հետ: Մենք պահանջելու ենք Լաչինի հումանիտար միջանցքի վերաբերյալ (համաձայնագրերի) ամբողջական կատարումը, ինչպես նաեւ միջազգային ասպարեզում հանդես կգանք նոր դիվանագիտական նախաձեռնությամբ՝ ուժեղացնելու ճնշումը (Ադրբեջանի վրա)»,- ասել է Ֆրանսիայի նախագահը՝ ելույթ ունենալով հանրապետության դեսպանների կոնֆերանսում:

Հեռարձակումն իրականացվել է Ելիսեյան պալատի Twitter-ի պաշտոնական էջում:

ԿԱՐԵՎՈՐ

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՏՐԱՄԱԴՐԱԾ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Հունիսի 15-ին տեղացած ուժեղ կարկուտի հետեւանքով Տավուշի եւ Լոռու մարզերի առավել տուժած 2268 անձ (Տավուշից՝ 427, եւ Լոռուց՝ 1796)՝ 428 ընտանիք, Հայկական կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) կողմից օգոստոսի 25-ին ստացել է կանխիկ աջակցություն աղետի հետեւանքները փոքր-ինչ մեղմելու նպատակով: Յուրաքանչյուր անձի «ՀայՓոստի» միջոցով տրամադրվել է 38 000 ՀՀ դրամ, ընդհանուր առմամբ փոխանցվել է 86 184 000 ՀՀ դրամ:

Հայկական Կարմիր խաչի ընկերությանը մարդասիրական աջակցության համար ֆինանսական միջոցները տրամադրել է Կարմիր խաչի եւ Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի Աղետներին արձագանքման արտակարգ իրավիճակների ֆոնդը:

ՀԿԽԸ-ն առավել տուժած ընտանիքների կարիքների անհատական գնահատում եւ ցուցակների վերջնական ճշգրտում իրականացրել է Տավուշի եւ Լոռու մարզերի տեղական ինքնակառավարման մարմինների հետ սերտ համագործակցությամբ:

Կանխիկ աջակցությունը տրամադրվել է բերքի 75-ից 100 տոկոսը եւ տնային կենդանիներ կորցրած, բնակելի հատվածներն ակնհայտ վնասված տնտեսություններին՝ հետեւյալ չափանիշներին համապատասխան.

- հինգից ավելի անդամից բաղկացած, այդ թվում՝ մինչեւ 18 տարեկան երկու կամ ավելի երեխաներ ունեցող ընտանիքներին,
- հինգից ավելի անդամից բաղկացած, այդ թվում՝ երկու կամ ավելի հաշմանդամություն ունեցող անդամներով ընտանիքներին,
- մինչեւ 18 տարեկան միակողմանի ծնողազուրկ երկու կամ ավելի երեխաներ ունեցող ընտանիքներին,
- մինչեւ 18 տարեկան երեք կամ ավելի երեխաներ ունեցող ընտանիքներ,
- միայն տարեցներից՝ 65 եւ բարձր տարիքի մարդկանցից բաղկացած ընտանիքներին,
- ընտանիքներին, որոնց եկամտի միակ աղբյուրը վնասված գյուղատնտեսական միջոցներն էին:

Հայկական կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ), լինելով Կարմիր խաչի եւ Կարմիր մահիկի միջազգային շարժման լիիրավ անդամ, առաջնորդվում է շարժման հիմնարար սկզբունքներով՝ Մարդասիրություն, Անկողմնակալություն, Չեզոքություն, Անկախություն, Կամավորություն, Եզակիություն, Համընդհանրություն:

Հանդիսանալով կառավարությանն աջակցող կառույց՝ մարդասիրական ոլորտում ՀԿԽԸ-ն արդեն 103 տարի է գործունեություն է ծավալում հանրապետության ամբողջ տարածքում հետեւյալ ռազմավարական ուղղություններով՝ աղետների կառավարում, բնակչության տեղաշարժ, սոցիալ - առողջապահություն, առաջին օգնություն, երիտասարդների հիմնախնդիրներին արձագանք, մարդասիրական արժեքների տարածում եւ այլն:

ՀԿԽԸ առաքելությունն է նվազեցնել բնակչության խոցելիությունը՝ մարդասիրության ուժի մոբիլիզացմամբ, նախապատրաստվել դիմակայելու այն իրավիճակներին, որոնք կարող են բնակչության խոցելիության պատճառ դառնալ, ցուցաբերել անհրաժեշտ օգնություն՝ սատարելով սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում գտնվող մարդկանց:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ԵՐԱՍԽՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ օգոստոսի 25-ից 27-ն ընկած ժամանակահատվածում ադրբեջանական զինված ուժերը բարձր ինտենսիվությամբ աննախատեպ քանակի կրակոցներ են արձակել Երասխ գյուղում կառուցվող գործարանի ուղղությամբ՝ թիրախավորելով նաեւ բանվորների կացարանը: Մենք տեղեկացանք, որ կատարվել է ավելի քան 60 կրակոց:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Արարատի մարզպետ Սեդրակ Թեւոնյանը հաստատեց տեղեկությունը՝ շեշտելով, որ կրակոցները ոչ թե գյուղի ուղղությամբ են, այլ հենց կառուցվող գործարանի, ինչի հետեւանքով այս պահին շինարարական աշխատանքները դադարեցված են:

«Այս պահին կոնկրետ կրակոցներ չկան, բայց հենց աշխատանքները վերսկսում են, նորից սկսում են կրակել: Տուժածներ չկան, բայց այս պահին գործարանի կառուցման աշխատանքները դադարեցված են»,- ասաց Թեւոնյանը:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԿԱՐՄՐՈՒԿԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Առողջապահության նախարարությունից ներկայացրել են կարմրուկով պայմանավորված իրավիճակը Հայաստանում:

Այսպես, ընդհանուր լաբորատոր դեպքերի թիվը 408 է, որից 287-ը երեխաներ են, 121-ը՝ մեծահասակ: 1 քաղաքացի հոսպիտալացված է, 257 քաղաքացի դուրս է գրվել հիվանդանոցից:

ԱՐՑԱԽԻՑ՝ ՀԱՅԱՍՏԱՆ

Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության «Հանրապետական բժշկական կենտրոն»-ից օգոստոսի 28-ին 6 բուժառուներ ուղեկցողների հետ միասին անհետաձգելի մասնագիտացված բժշկական օգնություն ստանալու համար, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջնորդությամբ եւ ուղեկցությամբ, տեղափոխվել են Հայաստանի Հանրապետության մասնագիտացված բժշկական կենտրոններ:

Արցախի առողջապահության նախարարությունից «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկացնում են, որ «Արեւիկ» բուժմիավորումում այս պահին ստացիոնար բուժում է ստանում 37 երեխա, 4-ը գտնվում է նորածնային եւ վերակենդանացման բաժանմունքում:

«Հանրապետական բժշկական կենտրոն»-ում ստացիոնար բուժում է ստանում 87 հիվանդ, 6 բուժառու գտնվում է վերակենդանացման բաժանմունքում, որից 3-ը՝ ծայրահեղ ծանր վիճակում:

ՆՈՐ ԱՆՏԱՌԱՊՈՒՐԱԿ

Դալմայի այգիների շուրջ 200 հա տարածքում կստեղծվի նոր անտառապուրակ: Այս մասին հայտարարվել է Երեւանի քաղաքապետարանում տեղի ունեցած աշխատանքային խորհրդակցության ժամանակ:

Այգին կունենա անտառային գոտի, մարզահրապարակներ, խաղահրապարակներ ու ջրային ավազան:

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ԴԻՄՈՒՄ Է ՄԱՀԱՑԱԾ ՆՈՐԱԾՆԻ ՀԱՅՐԸ

Գեղարքունիք մարզի Կարճաղբյուր գյուղի բնակիչ Անդրանիկ Մարգարյանը «Ժողովուրդ» օրաթերթի միջոցով դիմում է իրավապահ մարմիններին:

«Ես՝ Անդրանիկ Մարգարյանս, ապրում եմ Գեղարքունիք մարզի Կարճաղբյուր գյուղում: Տեւական ժամանակ բնակվում եմ Էրեբունի վարչական շրջանում: Ապրում եմ վարձով երեխաներիս եւ կնոջս հետ: Աշխատում եմ քարի արտադրամասում, ապրում եմ օրվա աշխատավարձով: Կինս՝ Մելինե Մանուկյանը, մինչ ֆիզարձակուրդ գնալը աշխատել է սուպերմարկետում: Կինս հաշվառված է եղել Նոր Արեշի պոլիկլինիկայում: Հղիության ինն ամիսների ընթացքում բացառապես ոչ մի խնդիր չի ունեցել: Հղիության ընթացքին հետեւել է բժշկուհի Մարգարիտա Թավմազյանը:

Հուլիսի 4-ին ստուգման այց է եղել, ամեն ինչ կարգին է եղել: Հուլիսի 5-ին՝ ժամը 14:00-ին, ցավերով տարել ենք Երեւանի «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն: Ընդունարանում հերթապահ բժիշկն է ընդունել կնոջս, ոչ մի խնդիր չի եղել: Հերթապահ բժիշկն ասել է, որ գնում է արձակուրդ, եւ չի վիրահատելու: Ես ասել եմ, որ ստուգեն կնոջս: Զգձգել են, անցել է երեք ժամ: 17:25 րոպեին նկարել են սիրտը, ասել են զարկերը կա, տանում ենք վիրահատության: Վիրահատությունից հետո ասել են՝ երեխան առողջ է, աղջիկ եք ունեցել, աչքներդ լույս: Անցել է 45 րոպե, կանչել է ինձ բժիշկն ու ասել, որ, կարելի է ասել, երեխան ծնվել է մահացած: Ինձ ցույց չեն տվել իմ երեխային: Ես խնդրել, աղաչել եմ, որ երեխայիս ցույց տան, ոչ մեկ ցույց չտվեց:

Խնդրում եմ Ձեզ պարզաբանել՝ ինչ են արել երեխայիս հետ, եթե մինչեւ վերջին րոպեն խնդիր չի ունեցել ո՛չ կինս, ո՛չ երեխան: Կինս լսել է մեր երեխայի ձայնը. մենք կասկածում ենք, որ մեր երեխան ողջ է: Այս դեպքով նախաձեռնվել է քրեական վարույթ, քննություն է ընթանում:

Հարգելի՛ ՀՀ առողջանահության նախարար Տիկին Ավանեսյան, այս նամակը գրում եմ Ձեզ՝ խնդրելով՝ հետեւողական լինեք եւ բացահայտեք այս դեպքի ողջ մանրամասները: Մեզ մոտ կան բազմաթիվ կասկածներ, որոնց պատասխանը մինչ օրս չունենք: Հորդորում եմ ՀՀ իրավապահ մարմիններին, ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին, ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանին, ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանին հետամուտ լինել իմ երեխայի մահվան դեպքով տարվող քննությանը:

Ես կտրուկ քայլերի կդիմեմ. հույսս դնում եմ իրավապահ մարմինների խղճին ու մասնագիտական պարտականության վրա՝ սպասելով օբյեկտիվ քննությանը»:

Հավելենք, որ խոսքը Նոր Արեշում գտնվող «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոնում հուլիսի 5-ին ծնված երեխայի մասին է: Աղջնակի ծնողները կասկածներ ունեն, որ մահացած երեխան իրենցը չէ:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ընտանիքի հայրը՝ Անդրանիկ Մարգարյանը, շեշտել ու հարց է բարձրացնում՝ ինչու իր դստեր մարմինն իրեն ցույց չեն տվել ու դուրս են հանել հիվանդանոցից:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲԱՑԱՌԻԿ

ԿՐԱԿՈՑՆԵՐ՝ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆՈՒՄ

Համացանցում կադրեր են հայտնվել, թե ինչպես են գիշերն անհայտ անձինք կրակոցներ արձակել Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանի նստավայրի ուղղությամբ:

«Ժողովուրդ» օրաթերթին այս դեպքով մանրամասներ են հայտնի դարձել: Մասնավորապես, մեզ հայտնի դարձավ, որ նստավայրի ուղղությամբ կրակոցներ արձակած եւ ներս մտած անձինք երկուսն են եղել, որոնք, ըստ իրավապահ համակարգի պարզած տեղեկությունների, եղել են ալկոհոլի ազդեցության տակ:

Ավելին՝ մեզ հայտնի դարձավ, որ այս երկու անձինք էլ ձերբակալված են: Հավելենք, որ Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը միջադեպի ժամանակ ներսում չի եղել:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱՇԱՌՔ՝ ՊԱՐԵԿՆԵՐԻՆ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում իրականացված քրեական վարույթներով կատարված նախաքննությամբ բացահայտվել են վարչական իրավախախտումները չարձանագրելու դիմաց ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության աշխատակիցներին կաշառք առաջարկելու դեպքեր:

Մասնավորապես, ոստիկանության պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի պարեկներ Ռ. Ա.-ն եւ Հ. Մ.-ն Երեւան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանում ծառայություն իրականացնելիս պարզել են, որ Ա. Ս.-ի վարած ավտոմեքենան տեխնիկական զննություն չի անցել: Վարորդն իր կողմից թույլ տված իրավախախտումը չարձանագրելու համար փորձել է որպես կաշառք 20.000 ՀՀ դրամ դնել պարեկ Հ. Մ.-ի գրպանը: Նույն պահին, պաշտոնատար անձին կաշառք առաջարկելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով, Ա. Ս.-ն ձերբակալվել եւ տեղափոխվել է ոստիկանության բաժին, որտեղ էլ սթափության զննության ժամանակ պարզվել է, որ Ա. Ս.-ն ավտոմեքենան վարել է ոչ սթափ վիճակում՝ ալկոհոլի ազդեցության տակ:

Մեկ այլ քրեական վարույթով իրականացված նախաքննությամբ էլ հիմնավորվել է, որ ոստիկանության պարեկներ Կ. Գ.-ն եւ Մ. Ս.-ն Կենտրոն վարչական շրջանում ծառայություն իրականացնելու ընթացքում կանգնեցրել են Ճ. Չ.-ի վարած ավտոմեքենան եւ ստուգել կողային ապակիների լուսաթափանցելիությունն ու վարորդի սթափության աստիճանը: Արդյունքում պարզվել է, որ Ճ. Շ.-ն ավտոմեքենան վարել է ոչ սթափ վիճակում, իսկ ավտոմեքենայի կողային ապակիների լուսաթափանցելիության չափը խախտված է եղել: Այս հանգամանքը հայտնաբերելով՝ պարեկ Կ. Գ-.-ն կազմել է համապատասխան արձանագրություն եւ Ճ. Չ.-ին մեկ տարի ժամկետով զրկել տրանսպորտային միջոց վարելու իրավունքից: Հայտնաբերված վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան արձանագրություններ չկազմելու համար Ճ. Չ.-ն մոտեցել է պարեկ Կ. Գ.-ին եւ քողարկված ձեւով՝ իբրեւ շնորհակալության ձեռքսեղմամբ, նրան տվել 10.000 ՀՀ դրամ կաշառք: Նույն պահին կաշառք առաջարկելու կասկածանքով Ճ. Շ.-ն ձերբակալվել է եւ տեղափոխվել ոստիկանության բաժին:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՍՊԱՌՆԱՑԵԼ Է ԱՇԽԱՏԱԿՑԻՆ

Քաղաքացի Նովել Քոչարյանին մեղադրանք է առաջադրվել: Նա 2023 թվականի հուլիսի 12-ին՝ ժամը 10:54-ին, ավազակությամբ ուրիշի գույքը հափշտակելու դիտավորությամբ մուտք է գործել Երեւան քաղաքի Զաքյան 10-րդ հասցեում գործող «Առնիկա» ՍՊ ընկերությանը պատկանող «Վագա ֆարմ» դեղատուն:

Նա, մոտենալով դեղատան աշխատակցուհի Տիգրանուհի Բոյաջյանին, իր հետ նախապես վերցված, մարմնական վնասվածք պատճառելու համար նախատեսված խոհանոցային դանակի սպառնալիքով իրականացնելով կյանքի համար վտանգ ներկայացնող բռնություն գործադրելու իրական վտանգ, պահանջել է դրամարկղում եղած գումարը տալ իրեն:

Այդ ժամանակ Տիգրանուհի Բոյաջյանը սեղմել է «Արմոբիլ» անվտանգության ծառայության կանչի կոճակը, որի ձայնից Նովել Քոչարյանը վախեցել է եւ դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությունը իր կամքից անկախ հանգամանքներով չիրագործելով՝ դիմել է փախուստի:

ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԱՀՎԱՆ ՊԱՏՃԱՌ

«Ժողովուրդ» օրաթերթին բացառիկ տեղեկություններ են հասել, թե ինչու է Սյունիքի զորամասերից մեկում երկու զինծառայող կյանքից զրկվել՝ մահացու հրազենային վիրավորում ստանալով: Հիշեցնենք, որ երեկ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնեց, որ օգոստոսի 27-ին դեռեւս չպարզված հանգամանքներում հրազենային մահացու վիրավորում են ստացել ՊՆ N զորամասի զինծառայողներ Արտյոմ Արայի Հայկազյանը եւ Արմեն Հայկի Խաչատրյանը: Մեզ հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ զինվորները, մարտական դիրքում քնելու թեմայի հետ կապված, վիճել են, որից հետո կռիվը թեժացել է, ու կրակել են միմյանց վրա: Հենց այս հանգամանքի հետեւանքով էլ երկուսի կյանքը փրկել չի հաջողվել: Ի դեպ, օրերս գրել էինք, որ օգոստոսի 10-ին մահացել էր ժորա Կարապետյանը, կա երկու ձերբակալված. զինվորին ծառայակիցներն էին հասցրել այն վիճակին, որ նա վերջ էր տվել կյանքին, իսկ, ահա, թեման եղել էր կրկին մարտական դիրքում քնելը:

ՀԱՄԱԿՈՒԲՍԵՑԻՆ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵՑ

Ազգային անվտանգության ծառայությունը կալանավորել է ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության, զորքերի բնակավորման եւ կոմունալ շահագործման վարչության նախկին պետ, գնդապետ Արմեն Սարգսյանին: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ վերջինիս ԱԱԾ-ն կալանավորել է Սերժ Սարգսյանի թիկնազորի նախկին պետ Վաչագան Ղազարյանի քրեական գործով: Ի դեպ, նա սպարապետ Վազգեն Սարգսյանի կուրսեցին է: Հիշեցնենք, որ Սերժ Սարգսյանի թիկնազորի նախկին պետ Վաչագան Ղազարյանը 5 տարի առաջ՝ հունիսի 25-ին, ձերբակալվել էր բանկից դուրս գալիս: Նրա ճամպրուկում հայտնաբերվել էր 120.000 դոլար եւ 436 մլն դրամ: Ինչպես հայտնի է՝ ԱԱԾ-ում քրեական վարույթ է առկա ՊՆ-ի հողատարածքների ապօրինի վաճառքի մասով, եւ, ահա, այս քրեական վարույթի շրջանակներում էլ կալանավորել են Վաչագան Ղազարյանին:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 25-ից 28-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել են հանցագործության 125 դեպք, որոնցից 7-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐՔ

ԱՆՀԱՄՈԶԻՉ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանին տեղեկատվական հարցում եմ ուղարկել՝ հարցնելով.

«1. Իջեւանի գինու, կոնյակի գործարանի կողմից վերջին 3 տարում Աղստեւ գետի հունում կատարված ապօրինի շինարարության հետեւանքով Իջեւանի դենդրոպարկը զրկվել է ոռոգման ջրից, դենդրոպարկում չորացել են հազվագյուտ, արժեքավոր 1500 ծառ ու թուփ, 24 հազար տնկի: Շրջակա միջավայրի նախարարությունը ե՞րբ է փորձագիտական հանձնաժողով ստեղծելու՝ դենդրոպարկին պատճառված հսկայական վնասները հաշվարկելու համար:

2. Իջեւանի դենդրոպարկին մեծ վնասներ պատճառած Իջեւանի գինու, կոնյակի գործարանին ի՞նչ տրամաբանությամբ է դենդրոպարկի տարածքից 5,7 հեկտար տարածք վարձակալությամբ տրվել՝ հանգստի գոտի ստեղծելու համար:

3. Շրջակա միջավայրի նախարարության ենթակայությամբ գործող «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար Լեւոն Տեր-Սիմոնյանը Իջեւանի դենդրոպարկի 4 աշխատողներին ծանուցել է Իջեւանի դենդրոպարկի հաստիքները օգոստոսի 20-ից կրճատելու մասին: Այդ հաստիքները լուծարելուց հետո դենդրոպարկում գտնվող հազվագյուտ, արժեքավոր ծառերի, թփերի, տնկիների խնամքը ովքե՞ր են իրականացրելու, դենդրոպարկի տարածքն ի՞նչ կազմակերպություն է տնօրինելու»:

Նախարարությունից ստացված պատասխանում նշված է.

«1. Նշված խնդիրը գտնվում է նախարարության ուշադրության տիրույթում, եւ մեկնարկել է փորձագիտական հանձնաժողով ստեղծելու գործընթաց:

2. Դենդրոպարկի տարածքը վարձակալությամբ է տրամադրվում «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված կարգով:

3. Դենդրոպարկի ընդհանուր տարածքը կազմում է 14,6 հա, որից 8,4964 քառակուսի մետրը 2016 թվականի մարտի 15-ից 24 տարի ժամկետով վարձակալության է հանձնվել «Կանաչ Սիմֆոնիա» ՍՊԸ-ին: Նշվածից հետեւում է, որ դենդրոպարկի ողջ տարածքը հանձնված է վարձակալության. հսկողությունն իրականացվում է վարձակալների կողմից: «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ը տարվա ընթացքում առնվազն երկու (գարնանային եւ աշնանային) ստուգում է իրականացնում վարձակալված տարածքներում»:

Նախարարությունից ստացված պատասխանում այդպես էլ չի պարզաբանվում, թե ինչու անցած 3 տարում դենդրոպարկի կրած վնասները հաշվարկող հանձնաժողով այդպես էլ չի ստեղծվել, այն նոր է մեկնարկել, ինչու են «գայլին գառ պահ տվել», այսինքն՝ դենդրոպարկից 5,7 հեկտար տարածք վարձակալությամբ հանձնել Աղստեւ գետի հունն ավերած, այնտեղ ապօրինի մեծ շինարարության արած, Իջեւանի դենդրոպարկը երկու տարի եւ յոթ ամիս ջրազրկած Իջեւանի գինու, կոնյակի գործարանին: Եվ վերջապես, ի՞նչ է լինելու գինու, կոնյակի գործարանին վարձակալությամբ տրված տարածքում գտնվող ընդհանուր 50 միլիոն դրամ արժեքով տնկիների հետ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԾՐԱԳԻՐ

ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ԼՈՌԻՈՒՄ

Լոռու մարզում գործում է մարզային ենթակայության 29 բուժհաստատություն, 5 բժշկական կենտրոն, 1 դիսպանսեր, 4 պոլիկլինիկա, 19 առողջության առաջնային պահպանման կենտրոն, հիվանդանոցային հզորությունը 461 մահճակալ է: Այս մասին նշվեց վարչապետ Նիկոլ Փաշինյանի մասնակցությամբ Վանաձորում կայացած խորհրդակցության ժամանակ, որտեղ ներկայացվեց Լոռու մարզպետի աշխատակազմի 2022թ. գործունեության հաշվետվությունն ու ընթացիկ տարում իրականացվող ծրագրերի ընթացքը:

«Ժողովուրդ» օրաթերթին վարչապետի աշխատակազմից հայտնում են, որ ոլորտում ներդրումների ծավալը կազմում է 1,7 մլրդ դրամ: Վանաձորի բժշկական կենտրոնում բացվել է Ֆիզիոթերապիայի եւ վերականգնողական բժշկության բաժանմունք, որը հագեցվել է «Ազնավուր հիմնադրամ»-ի աջակցությամբ: 2023թ. Սպիտակի բժշկական կենտրոնը սեփական միջոցներով ձեռք է բերել Siemens գերմանական ապրանքանիշի գերհզոր Siemens go.Up համակարգչային տոմոգրաֆ՝162 մլն դրամ արժեքով: Առողջապահության նախարարության կողմից 2022թ. մարզի 4 առողջապահական հաստատություններին տրամադրվել են թվային ռենտգեն սարքավորումներ, Ալավերդու բժշկական կենտրոնին անհատույց 5 տարի ժամկետով տրամադրվել է ամենագնաց շտապ օգնության ավտոմեքենա:

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի («COAF») կողմից կառուցվել է «Դսեղի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի նոր, ժամանակակից սարքավորումներով եւ գույքով հագեցած շենք: Ներդրումների ծավալը կազմում է 168 մլն դրամ:

Միջազգային համագործակցության շրջանակում «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի (COAF) կողմից շուրջ 2 մլրդ դրամի ներդրում է կատարվել գյուղական համայնքների զարգացման ծրագրերի շրջանակում: Մարզպետարանի նախաձեռնությամբ կազմակերպվել է Լոռու մարզի տնտեսական զարգացման համաժողովը: ԵՄ «Տեղական դերակատարների զորեղացում՝ հանուն զարգացման Լոռու եւ Տավուշի մարզերում» ծրագրի շրջանակում շուրջ 11.6 մլն դրամի ներդրում է կատարվել:

Նշենք, որ զբոսաշրջության բնագավառում ներդրումների ծավալը 2022թ. կազմել է շուրջ 1,8 մլրդ դրամ: Հյուրանոցային տնտեսություններ թիվը 273-ն է, որից 20-ը նոր հյուրանոցային տնտեսություններ են: 2022թ. մեկնարկել են Լոռու մարզի զբոսաշրջության զարգացման 2023-2027 թթ. ռազմավարության նախագծի մշակման աշխատանքները:

Վարչապետին ներկայացնելով մշակույթի եւ սպորտի բնագավառում իրականացված աշխատանքներն ու ընթացիկ ծրագրերը՝նշվեց, որ մարզում առկա է 19 մարզադպրոց, 3 մարզակումբ, 21 գրադարան, 8 թանգարան, 28 երաժշտական, արվեստի, գեղարվեստի պարարվեստի դպրոց: Լոռի-Փամբակ երկրագիտական թանգարանում վերականգնվել է շուրջ 21 հնագիտական իր: Թանգարանում կազմակերպվել են 7 թեմատիկ ցուցադրություններ: Այցելուների թիվը 2021 թ. կազմել է 2534, իսկ 2022 թ.՝3972: 7 դպրոցում իրականացվել են մարզադահլիճների հիմնանորոգման, շինարարական աշխատանքներ: Սպորտդահլիճներ են առկա 88 դպրոցում, որից նորոգման ենթակա են 64-ը:

Հավելենք, որ խորհրդակցության ժամանակ խոսվեց նաեւ առաջիկա ծրագրերի մասին: Մասնավորապես՝նշվեց, որ Լոռու մարզպետարանի եւ Վանաձորի համայնքապետարանի հետ համատեղ մշակվել է Վանաձոր համայնքի կայուն զարգացման ծրագիրը: Ծրագրի ընդհանուր արժեքը 27 մլն եվրո է: Լոռու մարզպետարանի հետ համատեղ մշակվել եւ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից հաստատվել են Վանաձոր, Սպիտակ, Թումանյան եւ Փամբակ խոշորացված համայնքների կոմունալ եւ սանիտարական պայմանների բարելավման ծրագրերը: «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի եւ Լոռու մարզպետարանի համատեղ ջանքերով ընթացքի մեջ է «Երեւանի շոկոլադի գործարան» ընկերության ներդրումային ծրագիրը: «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից մարզի 7 համայնքներում ընթացքի մեջ է 11 «Թումո տուփ»-երի եւ Վանաձորում «Թումո» կենտրոնի կառուցման գործընթացը:

Առաջիկա ծրագրերի շարքում են նաեւ Տաշիրի բժշկական կենտրոնի նոր շենքի կառուցումը, Վանաձորի բժշկական կենտրոնի կազմում գործող Վարակաբանական բաժանմունքի նոր մասնաշենքի կառուցումը, Ստեփանավանի բժշկական կենտրոնի հեմոդիալիզի բաժանմունքի բացումը:

Շարունակելով ներկայացնել առաջիկա ծրագրերի մասին տեղեկատվություն՝ նշվեց նաեւ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Աշոտաբերդ թաղամասում առկա վթարային փայտյա բնակելի շենքերի փոխարեն նոր թաղամասի կառուցումը, որի արդյունքում 309 ընտանիք կունենա նոր բնակարան: Ներդրումների ծավալը 2022 թ. կազմել է 24,3 մլն դրամ: Խոսվել է նաեւ 4 համայնքներում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների մասին, որի ներդրումների ծավալը 2022 թ. կազմել է 14,8 մլն դրամ:

Վարչապետը խորհրդակցության ընթացքում անդրադարձավ դպրոցների կառուցման, ինտենսիվ այգեգործության ընդլայնման, գյուղատնտեսական տնտեսություններին անհրաժեշտ խորհրդատվության տրամադրման, այլ ճյուղերի զարգացման, ճանապարհաշինության, դպրոցների եւ մանկապարտեզների հիմնանորոգման ու կառուցման, ինչպես նաեւ այլ ծրագրերին, պատասխանատուներին տվել է համապատասխան հանձնարարականներ:

ԵՂԱՆԱԿ

ՆՈՐՄԱՅԻՑ ԲԱՐՁՐ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ

Հայաստանի Հանրապետությունում գրեթե ողջ սեպտեմբերին ամառային ջերմային ֆոն կդիտվի, ջերմաստիճանն էլ նորմայից 1-2 աստիճանով բարձր կլինի:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկացրեց Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոնի տնօրենի տեղակալ Գագիկ Սուրենյանը՝ ընդգծելով, որ տեղումների քանակը նորմայի սահմաններում կլինի, այսինքն՝ գրեթե նույն քանակությամբ, ինչ օգոստոսի ամսին:

«Սեպտեմբերին օրացույցով տեղափոխվում ենք աշուն, սակայն ընդհանուր առմամբ կլիմայական ցուցանիշներով այն բացարձակ ամառային ամիս է: Մինչեւ սեպտեմբերի 20-ը հանրապետության նույնիսկ լեռնային շրջաններում ամառային ջերմային ֆոն է դիտվելու: Այս տարվա սեպտեմբերին օդի ամսական ջերմաստիճանը կանխատեսվում է 1-2 աստիճանով կլիմայական նորմայից բարձր, այսինքն՝ ավելի տաք սեպտեմբերի կլինի»,- նշեց Սուրենյանը: Փորձագետը նշեց, որ հարավ-արեւմուտքից օգոստոսի 28-ին ցիկլոն է ներթափանցելու ՀՀ տարածք:

«Օգոստոսի 29-ի կեսօրից հետո եւ հատկապես երեկոյան ժամերին շրջանների մեծ մասում կլինեն ամպրոպային բնույթի կարճատեւ անձրեւներ: Օդի ջերմաստիճանն էլ մոտ 4-5 աստիճանով կիջնի, սակայն դա կտեւի 1 օր»,- նշեց Սուրենյանը: Ըստ նրա՝ օգոստոսի 30-ից այդ ցիկլոնն աստիճանաբար դուրս կգա Հայաստանից:

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 44 ՃՏՊ. 7 մարդ զոհվել է, 59-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԲԱՑԱՀԱՅՏՎԵՑ

ԹՄՐԱՆՅՈՒԹ՝ ՏԱՊԱԿԱԾ ՀԱՎՈՒՄ

«Արմավիր» քրեակատարողական հիմնարկի ծառայողները տապակած հավի ոսկորների միջից հայտնաբերել են թմրամիջոցներին նմանվող զանգվածներ:

Քրեակատարողական հիմնարկներ թմրամիջոցների եւ այլ արգելված իրերի ներթափանցման դեմ պայքարի շրջանակներում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի օպերատիվ եւ անվտանգության ապահովման բաժինների ծառայողները, իրացնելով նախապես ստացված տեղեկությունները, օգոստոսի 25-ին՝ ժամը 11:15-ի սահմաններում, զննության են ենթարկել քաղաքացի Գ.Մ.-ի կողմից կալանավորված անձ Ն.Ս.-ի անվամբ բերված հանձնուքը:

Հանձնուքում առկա տապակած հավի ոսկորների միջից հայտնաբերվել է ընդհանուր 2,43 գրամ կասկածելի զանգվածներով 8 պոլիէթիլենային փաթեթ: Փաթեթներից երեքում առկա են եղել Մեթամֆետամին տեսակի թմրամիջոցին նմանվող, ընդհանուր 1,2 գրամ քաշով, սպիտակ, բյուրեղանման զանգվածներ, իսկ հինգում՝ Կոկաին տեսակի թմրամիջոցին նմանվող, ընդհանուր 1,23 գրամ քաշով, սպիտակ զանգվածներ:

Դեպքից անմիջապես հետո քրեակատարողական ծառայողները ոչ նախատեսված խուզարկություն են իրականացրել վերոնշյալ կալանավորված անձ Ն.Ս.-ի խցում, ինչի արդյունքում պահարանի վրա դրված պլաստմասե տարայից հայտնաբերվել է 3 թղթե փաթեթ, իսկ պահարանի մեջ պատրաստված թաքստոցից՝ բջջային հեռախոս եւ բաժանորդային քարտ: Փաթեթներում առկա են եղել ընդհանուր 1,55 գրամ քաշով, թմրամիջոցին նմանվող, սպիտակ զանգվածներ:

Կալանավորված անձ Ն.Ս.-ն բանավոր հայտարարել է, որ իրեն պատկանում են միայն բջջային հեռախոսն ու բաժանորդային քարտը, իսկ նույն խցում պահվող մեկ այլ կալանավորված անձ Գ.Ն.-ն խոստովանել է, որ հայտնաբերված զանգվածները պատկանում են իրեն:

Հանձնուք բերած քաղաքացի Գ.Մ.-ն «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի ծառայողների կողմից ձերբակալվել է եւ հայտնաբերված բոլոր զանգվածների հետ միասին ներկայացվել ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժին:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերն ըստ ներկայացված հերթականության՝

-Արագածոտնի մարզ, համայնք Ապարան, Ապարան ք., Խանջյան փողոց, 14 հասցեում գտնվող 239,03 ք.մ. բնակելի տուն, 9,27 ք.մ. կաթսայատուն եւ 0,1102 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 17760000 ՀՀ դրամ:

- Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք., Ն. Գոգոլի փողոց, 5 հասցեում գտնվող 459,13 ք.մ. բնակելի տուն, 8,8 ք.մ. նկուղ, 2,05 ք.մ. /4,51 խ.մ./ պարիսպ, 7,16 ք.մ. շվաքարան, 4,32 ք.մ. /9,5 խմ./ պարիսպ եւ 0,06586 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 67580000 ՀՀ դրամ:

- Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք., Խրիմյան Հայրիկի 1-ին թաղամաս, 4բ շենք, 22 հասցեում գտնվող 59,98 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 12830000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Շենգավիթ, Ներքին Շենգավիթ, 11-րդ փողոց, 1/21 շենք, 6 հասցեում գտնվող 74,6 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 35000000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Էրեբունի, Խաղաղ Դոնի փողոց, 15 շենք, 32 հասցեում գտնվող 36,6 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 19300000 ՀՀ դրամ:

- Արարատի մարզ, համայնք Արարատ ք., Խանջյան փողոց, 1գ շենք, 13 հասցեում գտնվող 53,05 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 7340000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Նուբարաշեն, Նուբարաշենի 11-րդ փողոց, 14/1 հասցեում գտնվող 321,7 ք.մ. բնակելի տուն եւ 0,02141 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 60900000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Նոր-Նորք, Վ. Թոթովենցի փողոց, 1 շենք, 20 հասցեում գտնվող 101,8 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 41400000 ՀՀ դրամ:

- Տավուշի մարզ, համայնք Իջեւան ք., Մայիսի 28-ի փողոց, 29/1 հասցեում գտնվող 17,72 ք.մ. ավտոտնակ, 65,73 ք.մ. խանութ եւ 0,06964 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 16580000 ՀՀ դրամ:

- Տավուշի մարզ, համայնք Իջեւան, Իջեւան ք., Երիտասարդական փողոց, 5 շենք, 52 հասցեում գտնվող 40,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 10300000 ՀՀ դրամ:

- Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ ք., Ե. Չարենցի փողոց, 19 շենք, 50 հասցեում գտնվող 60,5 ք.մ. բնակարան եւ 9,5 ք.մ. ինքնակամ կցակառույց: Լոտի մեկնարկային գինը՝ 17300000 ՀՀ դրամ:

- Գեղարքունիքի մարզ, համայնք Սեւան ք., 5-րդ միկրոթաղամաս, 12 շենք, 1 հասցեում գտնվող 106,66 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 12900000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Կենտրոն, Վ. Բրյուսովի փողոց, 19 շենք, 35 հասցեում գտնվող 103,4 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 47500000 ՀՀ դրամ:

- Արարատի մարզ, համայնք Վեդի ք., Ա. Եղյան փողոց, 32 հասցեում գտնվող 232.4 ք.մ. բնակելի տուն, 4.6 ք.մ. սանհանգույց եւ 0.0709 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 26260000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Շենգավիթ, Արտաշեսյան պողոտա, 63/1 շենք, 26 հասցեում գտնվող 74,22 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 33300000 ՀՀ դրամ:

- Սյունիքի մարզ, համայնք Քաջարան, Քաջարան ք., Խ. Աբովյան փողոց, 11 շենք, 32,33 հասցեում գտնվող 94,5 ք.մ. բնակարան եւ 3,0 ք.մ. ինքնակամ կցակառույց: Լոտի մեկնարկային գինը՝ 16670000 ՀՀ դրամ:

- Սյունիքի մարզ, համայնք Կապան, Կապան ք.., Մ. Ստեփանյան փողոց, 4 շենք, 10 հասցեում գտնվող 78 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 15900000 ՀՀ դրամ:

- Սյունիքի մարզ, համայնք Կապան, Կապան ք., Հ. Ավետիսյան փողոց, 2ա շենք, 26 հասցեում գտնվող 53,6 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 12620000 ՀՀ դրամ:

- Սյունիքի մարզ, համայնք Կապան, Կապան ք., Հ. Ավետիսյան փողոց, 1 շենք, 99 հասցեում գտնվող 35,2 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 7530000 ՀՀ դրամ:

- Լոռու մարզ, համայնք Վանաձոր, Վանաձոր ք., Վարդանանց փողոց, 47 շենք, 46 հասցեում գտնվող 53,85 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 13090000 ՀՀ դրամ:

- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք., Երեւանյան խճուղի, 147 շենք, 54 հասցեում գտնվող 77,23 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 9700000 ՀՀ դրամ:

- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք., Նարեկացու փողոց, 43 շենք, 35 հասցեում գտնվող 89,06 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 9600000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Արաբկիր, Ն. Դումանի փողոց, 19 հասցեում գտնվող 275,2 ք.մ. բնակելի տուն, 19,9 ք.մ. ավտոտնակ եւ 0,04218 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 139440000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Աջափնյակ, Շինարարների փողոց, 15 շենք, 82 հասցեում գտնվող 44,4 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 32100000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Մալաթիա, Կուրղինյան փողոց, 29 շենք, 26 հասցեում գտնվող 127,23 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 41830000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Մալաթիա, Գ. Շերամի փողոց, 55 շենք, 44 հասցեում գտնվող 89,68 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 36870000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Նոր-Նորք, Շոպրոնի փողոց, 8 շենք, 13 հասցեում գտնվող 61,44 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 23000000 ՀՀ դրամ:

- Գեղարքունիքի մարզ, համայնք Վաղաշեն, 16-րդ փողոց, 2 հասցեում գտնվող 209 ք.մ. բնակելի տուն եւ 0,3771 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 21650000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Աջափնյակ, Գ. Բաշինջաղյան 1-ին փողոց, 10 շենք, 37 հասցեում գտնվող 67,9 ք.մ. բնակարան եւ 20,3 ք.մ. ինքնակամ կառուցված շինություն: Լոտի մեկնարկային գինը՝ 31800000 ՀՀ դրամ:

- Արագածոտնի մարզ, համայնք Կոշ, 16-րդ փողոց, 29 հասցեում գտնվող 239,5 ք.մ. բնակելի տուն, 22,5 ք.մ. ավտոտնակ, 14 ք.մ. տնտեսական պահեստ, 10 ք.մ. հնոց, 8,64 ք.մ. լոգարան, 21 ք.մ. անասնաշենք եւ 0,13 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 19010000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Աջափնյակ, Ն. Սիսակյան փողոց, 3 շենք, 58 հասցեում գտնվող 47,3 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 30700000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Աջափնյակ, Մ. Մազմանյան փողոց, 14 շենք, 1 հասցեում գտնվող 59,6 ք.մ. բնակարան եւ 13,4 ք.մ. ինքնակամ կառուցված շինություն: Լոտի մեկնարկային գինը՝ 30400000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Էրեբունի, Մուրացանի փողոց, 113/1 շենք, 48 հասցեում գտնվող 46,5 ք. մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 24260000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Աջափնյակ, Բաշինջաղյան փողոց, 166/3 հասցեում գտնվող 166,3 ք.մ. բնակելի տուն, 4,2 ք.մ. խորդանոց եւ 0,0121 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 42900000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա, Ս. Օհանովի փողոց, 58/1 շենք, 39 հասցեում գտնվող 60,33 ք.մ.բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 38840000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Եղվարդ, Եղվարդ ք., Ազատամարտիկների թաղամաս, 7-րդ փողոց, 16 հասցեում գտնվող 420,1 ք.մ. բնակելի տուն, 40,7 ք.մ. ավտոտնակ, 1,8 ք.մ. կաթսայատուն, 17,6 ք.մ. /35,2 խ.մ./ պարիսպ եւ 0,0933 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 68900000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Կենտրոն, Ե. Չարենցի փողոց, 12 շենք, 32 հասցեում գտնվող 145,48 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 194700000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 14.09.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 09.10.2023թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ԿԵՂԾ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների նախկին պաշտպան Արման Թաթոյանը ֆեյսբուքյան գրառմամբ անդրադարձել է ադրբեջանցիների կողմից Արցախի Հանրապետության բաղաքացիների առանգմանը. «Պարզ է, չէ՞, որ ադրբեջանական իշխանության ախորժակը նոր է բացվում:

Բա ո՞ր են ամեն գնով կեղծ խաղաղություն քարոզողները, բան չկա՞ ասելու: Ադրբեջանական իշխանության դեպքում նույնիսկ միջազգային որեւէ երաշխիք չի գործում, ուր մնաց նրանց հետ մենակ մնալու դեպքում:

Այս պահի տեղեկություններով՝ ադրբեջանական կողմն ապօրինաբար ազատությունից զրկել եւ առեւանգել է 3 արցախցի երիտասարդի, այդ թվում՝ բիրտ ուժի կիրառությամբ:

Հայաստան ուղեւորվող երիտասարդների տարել են հարցաքննության եւ նրանցից 3-ին առեւանգել:

Երիտասարդները Բերձորի (Լաչինի) ճանապարհով, ռուս խաղաղապահների ուղեկցությամբ, ուղեւորվել են Հայաստան ուսման նպատակով: Այսինքն՝ այս դեպքում էլ նախապես իմացել են երիտասարդների ուղեւորվելու մասին, ինչպես որ Վագիֆ Խաչատրյանի առեւանգման պարագայում, որ տեղի էր ունենում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ուղեկցությամբ:

Սա կամայականություն է բացարձակ՝ մարդուն ապօրինի ազատությունից զրկել ու առեւանգել, հանցավոր արարք:

Սրանք ադրբեջանական ֆաշիստական հայատյաց քաղաքականության բնական պտուղներն են:

Այսպես է լինում, երբ զիջում ես իրավունքներդ, արժանապատվությունդ ու մյուս կենսական իրավունքները զոհ ես դնում քաղաքական շահերին, երբ երկրում առաջնային հարցերը երկրորդականից եւ անգամ երրորդականից հետո են, կամ հարց է՝ արդյոք առաջնային հարցերը տեղ ունեն առհասարակ»:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՊԱՏԿԵՐԱԳԻՐՔ

ԿՏԱՎՆԵՐԸ՝ «ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ»-ՈՒՄ

Գյումրու համայնքապետարանի ցուցասրահում տեղի ունեցավ գյումրեցի նկարիչների «Սերունդների երկխոսություն» պատկերագրքի շնորհանդեսը: Առաջին անգամ Գյումրիում ներկայացվեց նաեւ նախագծի DJ ART տարբերակը: «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ պատկերագրքի համար հիմք ծառայել է համանուն նախագիծը, որի շրջանակներում ներկայացվել են գյումրեցի նկարչական ընտանիքներ:

Նախագիծն իրականացնում է Հայկական կրթամշակութային «Ռեալ Արտ» հիմնադրամը՝ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության ֆինանսավորմամբ եւ Գյումրու համայնքապետարանի աջակցությամբ: Նախագծի հեղինակը արվեստաբան Արաքս Մարգարյանն է: Նպատակն է բացահայտել Ալեքսանդրապոլ/Լենինական/Գյումրու մշակութային բեղունության գաղտնիքը, ներկայացնել սերնդափոխությունը կերպարվեստի ոլորտում, ցույց տալ տեղի ունեցող զարգացումները: Նախագիծը հետամուտ է հանրայնացնել Գյումրու կերպարվեստը, այն դարձնել գրավիչ ու ճանաչելի:

Նշենք, որ նախագծի շրջանակներում անցած ամիսների ընթացքում ներկայացվել է 4 նկարչական ընտանիք՝ Միրզոյաններ, Ղուկասյաններ, Մանուկյաններ եւ Ավետիսյաններ՝ 8 ստեղծագործողների, որոնք աշխատում են տարբեր ոճերով, տեխնիկաներով: Նախագիծն իրականացվել է Գյումրու համայնքապետարանի աջակցությամբ:

«Նախագիծը սիրվեց ու հավանության արժանացավ ինչպես գյումրեցիների, այնպես էլ քաղաք այցելած հյուրերի կողմից, ինչի մասին փաստում է այցելուների թիվը՝ ավելի քան երեք հազար, սակայն, ես կարծում եմ, նախագիծը կունենա նաեւ շարունակություն, քանի որ քաղաքում շատ հրաշալի նկարչական ընտանիքներ էլի կան, ու նախագիծը չի կարելի ավարտված համարել: Գյումրին ունի մեծ ներուժ: Հենց այս նախագծի ծնունդը այս գիրքն է, որն ավելի վիզուալ է»,- նշեց նախագծի հեղինակ Արաքս Մարգարյանը՝ շնորհակալություն հայտնելով նրանց, ում շնորհիվ պատկերագիրքը հրատարակվել է:

Գյումրու քաղաքապետարանի մշակույթի եւ երիտասարդության հարցերի բաժնի ղեկավար Լիլիթ Թովմասյանը, Գյումրու քաղաքապետի անունից շնորհակալագրեր հանձնելով նախագծի մասնակիցներին ու հեղինակներին, նշեց, որ այս նախագիծն այն նախագծերից մեկն է, որ երբեւէ ունեցել էին Գյումրիում. «Շատ հետաքրքիր խորհուրդ ուներ, մի կողմից՝ սերունդների միջեւ կապը, մյուս կողմից՝ դեպի ապագան նայող: Այն նաեւ անդրադարձ է այն արվեստագետներին, ում մինչ այս առիթ չէինք ունեցել ներկայացնելու, կամ տեւական ժամանակ ցուցադրություն չէր եղել: Ես վստահ եմ, որ հաջորդ տարի եւս նախագիծը շարունակություն կունենա»:

Պատկերագրքի ու տեքստերի հեղինակը Արաքս Մարգարյանն է, լուսանկարները՝ Գուրգեն Գինոսյանի, ձեւավորումը՝ Մկրտիչ Մաթեւոսյանի: Պատկերագիրքը երկլեզու է, անգլերեն թարգմանությունը՝ Մարինե Հովհաննիսյանի եւ Կարինե Արեւշատյանի:

ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՕՐԵՐ

Հայաստանում անցկացվող «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագրի շրջանակում առաջին անգամ նաեւ գորգագործության բաց դաս է անցկացվել: Միջոցառումն իրականացրել է Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանը:

Առաջին նմանօրինակ միջոցառումը տեղի է ունեցել օգոստոսի 26-ին Հյուսիսային պողոտայում. գորգագործության եւս մեկ ցուցադրական դաս անցկացվեց օգոստոսի 27-ին Սարյան փողոցում:

«Վարպետաց դասերի միջոցով նպատակ ունենք գորգագործությունը հասարակության շատ ավելի լայն շրջանակներին հասանելի դարձնելու: Այցելուները կարող են մոտենալ ու փորձել հանգույց գործել՝ինչ-որ չափով ծանոթանալով գորգագործական ավանդույթներին»,- ասում է թանգարանի տնօրեն Լուսինե Թորոյանը՝տեղեկացնելով, որ Ժողովրդական արվեստների թանգարանի Փայտարվեստի ցուցասրահում նաեւ փայտագործության ցուցադրական դաս է անցկացվել:

Թանգարանի տնօրենի խոսքով՝ հատկապես վերջին տարիներին գորգագործության հանդեպ հետաքրքրությունը բավականին մեծացել է, իսկ նմանօրինակ միջոցառումներ թանգարանը կազմակերպել է ինչպես Երեւանում, այնպես էլ ՀՀ մարզերում. «Եթե դեռ 10 տարի առաջ շատ քիչ կենտրոններ կային, որոնք զբաղվում էին գորգագործությամբ եւ նաեւ դասընթացներ էին կազմակերպում, այսօր այդ կենտրոնների թիվը բազմապատկվել է ինչպես մարզերում, այնպես էլ Երեւանում»:

Ի դեպ, Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանն այս տարի նշում է հիմնադրման 45-ամյակը. այդ առիթով հատուկ արարողակարգով մեկնարկեց թանգարանի հոբելյանին նվիրված գորգի գործման գործընթացը: Լուսինե Թորոյանի խոսքով՝ գորգը պատրաստ կլինի մինչեւ տարեվերջ:

Հիշեցնենք՝ «Եվրոպական ժառանգության օրերն» այս տարի անցկացվեցին «Կենսունակ ժառանգություն» խորագրով: Այն նվիրվում էր «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի 20-ամյակին:

Երկու օրերի ընթացքում ավելի քան 100 մշակութային կազմակերպություններ իրենց հարկի ներքո հյուրընկալեցին այցելուներին՝ կազմակերպելով օրվա խորհրդին համահունչ բազմաթիվ մշակութային միջոցառումներ: Տեղի ունեցան դասական եւ հայկական ժողովրդական համերգներ, տեսաֆիլմերի ցուցադրություններ, գրական-երաժշտական ցերեկույթներ, կրթական, ինտերակտիվ ծրագրեր, հանդիպում-քննարկումներ, դասախոսություններ, վարպետաց դասեր եւ այլն:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԸՄԲԻՇՆԵՐԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

Համաշխարհային դպրոցական խաղերում Հայաստանի ներկայացուցիչները մեդալներ են նվաճել ազատ ոճի ըմբշամարտի մրցաշարում:

Արծաթե մեդալակիրներ են դարձել 57 կգ քաշային Ավետիք Թութխալյանը եւ 62 կգ քաշային Մաքսիմ Մկոյանը, 44 կգ քաշային Նարեկ Հակոբջոխվյանը նվաճել է բրոնզե մեդալ. հաղորդում է ՀԸՖ-ի մամուլի ծառայությունը:

Ավելի վաղ այս խաղերում ոսկե մեդալակիրներ էին դարձել հունահռոմեական ոճի ըմբշամարտի մրցաշարին մասնակցած 44 կգ քաշային Մարատ Աճեմյանը եւ 62 կգ քաշային Արամ Սարգսյանը:

ՇԱԽՄԱՏԻՍՏՆԵՐԸ՝ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ

Հայ պատանիները մրցանակային տեղեր են զբաղեցրել 29th Abu Dhabi International Chess Festival մրցաշարում:

«Ժողովուրդ» օրաթերթը Հայաստանի շախմատի ֆեդերացիայի պաշտոնական կայքից տեղեկանում է, որ Միքայել Ռոստոմյանը մինչեւ 2300 վարկանիշ ունեցող շախմատիստների խմբում 9 հնարավորից վաստակել է 7 միավոր եւ զբաղեցրել 3-րդ հորիզոնականը:

Ֆելիքս Թոխյանը մինչեւ 2000 վարկանիշ ունեցող շախմատիստների խմբում 9 հնարավորից վաստակել է 7 միավոր եւ զբաղեցրել 7-րդ հորիզոնականը: Ֆելիքս Թոխյանը մասնակցել է նաեւ պատանեկան մրցաշարին եւ 7.5 միավորով զբաղեցրել 5-րդ հորիզոնականը:

Համլետ Սահակյանը պատանեկան մրցաշարում զբաղեցրել է երրորդ հորիզոնականը մինչեւ 12 տարեկանների պայքարում: Բոլոր մրցանակակիրների մարզիչն է Հայկ Խաչիկյանը:

ԱՊԱԳԱ ՄԵՍՍԻՆ

Աշխարհի չեմպիոն Արգենտինայի հավաքականի ավագ Լիոնել Մեսիի ավագ որդին դարձել է ամերիկյան «Ինտեր Մայամիի» ակումբային ակադեմիայի խաղացող. հաղորդում է Daily Mail-ը:

11-ամյա Տիագո Մեսին հանդես կգա ակադեմիայի մինչեւ 12 տարեկանների թիմում: Լիոնել Մեսին այս ամռանն է միացել «Ինտեր Մայամիին», որի կազմում անցկացրած 9 խաղում խփել է 11 գոլ, կատարել 3 գոլային փոխանցում, նվաճել ԱՄՆ-ի եւ Մեքսիկայի Լիգաների գավաթը:

ՉԻ ՕԳՆԻ «ՌԵԱԼԻՆ»

Մադրիդի «Ռեալի» բրազիլացի հարձակվող Վինիսիուս Ժունիորը 4-6 շաբաթ չի կարողանա օգնել իտալացի Կառլո Անչելոտիի գլխավորած թիմին. հաղորդում է El Chiringuito TV-ն:

23-ամյա ֆուտբոլիստը ազդրի մկանային վնասվածք էր ստացել «Սելտայի» դեմ Իսպանիայի առաջնության երրորդ տուրի խաղում: «Ռեալը» հաղթել էր անգլիացի կիսապաշտպան Ջուդ Բելինգեմի գոլի շնորհիվ: «Սելտայի» դեմ խաղում Վինիսիուսը վնասվածքի պատճառով փոխարինվել էր 18-րդ րոպեին:

Անցած մրցաշրջանում Վինիսիուսը «Ռեալի» հետ մասնակցել էր 55 հանդիպման, խփել 23 գոլ, կատարել 21 գոլային փոխանցում:

● Օգոստոսի 30-ին «Մեցցո» ակումբում տեղի կունենա Արամ MP3-ի համերգը: Տոմսերի արժեքը՝ 5000-25000 դրամ: Սկիզբը՝ժամը 21:00-ին:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՔԻՆՇԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ո՞վ ենթակա չէ պարտադիր զինվորական ծառայության զորակոչի:

Համլետ Բոլեյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Պարտադիր զինվորական ծառայության ենթակա չէ այն քաղաքացին, որը նախկինում դատապարտվել է ազատազրկման ծանր կամ առանձնապես ծանր կամ առնվազն երկու անգամ դիտավորությամբ կատարած հանցագործության համար եւ ազատազրկման ձեւով պատիժ է կրել երեք տարուց ոչ պակաս ժամկետով կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 139-րդ կամ 142-րդ կամ 266-րդ կամ 272-րդ կամ 327.2-րդ կամ 327.3-րդ կամ 327.5-րդ կամ 362-րդ հոդվածով կամ 363-րդ հոդվածի 2-րդ եւ (կամ) 3-րդ մասերով նախատեսված արարքներ կատարելու համար:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայտարարված զորակոչի ժամանակ պարտադիր զինվորական ծառայության չի կարող նաեւ զորակոչվել այն անձը, որը պատիժ է կրում ազատազրկման կամ կալանքի ձեւով, կամ որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում, բացառությամբ քաղաքացու նկատմամբ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից խուսափելու պատճառով հարուցված քրեական հետապնդման, եթե քաղաքացին գրավոր ցանկություն է հայտնել զորակոչվելու պարտադիր զինվորական ծառայության:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԱՌԱՔՈՒՄ

ՀԱՐՑ. Ինչո՞վ է տարբերվում հասարակ առաքանին պատվիրված (գրանցված) առաքանուց:

Ջեմմա Միքայելյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Պատվիրված առաքանիները գրանցվում եւ ստանում են բեռնային համար, որով հաճախորդը կարող է հետեւել առաքանու ուղուն: Պատվիրված (գրանցված) առաքանի ուղարկելու համար հաճախորդը ՀայՓոստին ներկայացնում է անձը հաստատող փաստաթուղթ:

ՀայՓոստ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հասարակ առաքանիների դեպքում բեռնային համար չի տրվում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի բռնցքամարտի պատանեկան հավաքականը 2 ոսկե, 4 արծաթե եւ 7 բրոնզե մեդալ է նվաճել Սլովենիայում անցկացված կրտսեր տարիքի պատանիների Եվրոպայի առաջնությունում. 13 մեդալն, ի դեպ, այս տարիքային խմբում ռեկորդային է հայկական բռնցքամարտի պատմության մեջ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+10 + 14 +18 + 22
Կոտայքի լեռներ	+10+ 13 +17 + 21
Կոտայքի նախալեռներ	+16 + 17 +25 + 27
Գեղարքունիք	+9 + 12 +18 + 23
Լոռի	+10 + 14 +18 + 22
Տավուշ	+15+ 19 +20 + 24
Արագածոտնի լեռներ	+6 + 8 +20 + 23
Արագածոտնի նախալեռներ	+14 + 17 +36 + 31

Արարատ	+18 + 20 +39 + 31
Արմավիր	+16+ 19 +28 +30
Վայոց ձորի լեռներ	+11 + 13 +19 + 23
Վայոց ձորի նախալեռներ	+18 + 21 +29 + 32
Սյունիքի հովիտներ	+17 + 21 +27 + 29
Սյունիքի նախալեռներ	+10+ 13 +20 + 22
ԼՂՀ	+19 + 22 +23 + 28
Երեւան	+23 + 25 +32 + 34

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **28.8.2023**
Հասցեն՝ Գերաքրքրության մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*